ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 հոկտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

148
(2814)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԱԿԱՆ ԾԱՆՈԹ ՁԵՌԱԳԻՐ

Երեկ բռնի տեղահանված մի խումբ արցախցիներ ժամեր շարունակ ակցիա իրականացրին ՀՀ-ում Արցախի ներկայացուցչության դիմաց. նրանք մի շարք պահանջներ ներկայացրին Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանին: Բնականաբար, արցախցիները իրավունք ունեն եւ պարտավոր են պահանջատեր լինել իրենց իշխանություններից եւ պատասխաններ պահանջել նրանցից: Ամեն բան, սակայն, այնքան պարզ եւ ընկալելի կլիներ, եթե մի շարք մութ ու քողարկված դետալներ մեր աչքից վրիպեին: Նախ՝ուշագրավ է, որ ակցիա իրականացնող արցախցիները որեւէ պահանջ չունեին Արցախի հանձնման գլխավոր մեղավորից՝Նիկոլ Փաշինյանից եւ նրա իշխանությունից, հակառակը՝ամեն երկրորդ խոսքին կրկնում էին, որ գոհ են Հայաստանի իշխանություններից, որ իրենց գումար են տալիս, կացարանով են ապահովում. սա՝այն դեպքում, երբ հաճախ տեսնում ենք անօթեւան մնացած, քաղցած եւ դրսում գիշերող արցախցիների: Ակցիա իրականացնող արցախցիների հրահանգիչներն էլ անընդհատ նրանց կողքից հիշեցնում էին, որ ամեն խոսքի կրկնեն նույնը՝թե Հայաստանի իշխանությունների հետ խնդիր չունեն, իրենց խնդիրը Արցախի իշխանությունների հետ է: Արցախցիները երեկ իրենց ակցիայի ժամանակ կարմիր թելի նման մի գիծ էին առաջ տանում, թե արցախցի բարձրաստիճան պաշտոնյաները տարիներ շարունակ իրենց թալանել են եւ այդ գումարով իրենց թանկարժեք տներ, ավտոմեքենաներ գնել: Ավելին՝ նրանք դիմում էին Հայաստանի իրավապահ մարմիններին, որպեսզի Արցախի բարձրաստիճան պաշտոնյաների ունեցվածքը բռնագրավեն ու տան անօթեւան մնացած արցախցիներին: Ճիշտ նույն թեզը, ինչ Փաշինյանն է առաջ քաշում, այդ թվում՝ ֆեյքային գրոհներով: Կարճ ասած, շատ ծանոթ ձեռագիր է՝ բոլորիս արդեն ծանոթ «փաշինյանական» ձեռագիր. Հայաստանում էլ մշտապես տարածքային նոր կորուստների կամ նոր պարտությունների դեպքում, երբ հանրությունը պետք է իր արդար բողոքի ձայնը բարձրացնի, Նիկոլ Փաշինյանը ու նրա կողմնակիցները անգիր արած սկսում են նույն թեզը ներարկել հանրության մեջ՝նախկիններ, թալանչիներ, ապօրինի ունեցվածք եւ նույն ծեծված խոսքերը: Այսպիսով, այս մի շարք ակնհայտ փաստերը համադրելով՝ակնհայտ է դառնում դեռեւս երեկվանից շրջանառվող թեզը, որ երեկվա, այսպես կոչված, ինքնաբուխ ակցիան ուղղորդված էր Արցախի կորստի գլխավոր մեղավոր Նիկոլ Փաշինյանի եւ նրա խոսափողի՝ ավերակների վրա իշխանություն տենչող Սամվել Բաբայանի կողմից: Նպատակն էլ պարզ է՝ Հայաստանի իշխանությունների դեմ կուտակված հանրային ահռելի դժգոհությունն ուղղորդել դեպի Արցախի իշխանությունները, որպեսզի այդ դժգոհությունը մի օր հանկարծ չպայթի Երեւանի կենտրոնում՝ ընդդեմ Փաշինյանի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Ազգային անվտանգության ծառայություն են հրավիրվում Արցախի Հանրապետության պաշտոնյաներ, որոնք, ըստ էության, ԱԱԾ-ում հարցաքննվում են տարբեր քրեական գործերով, ինչպես նաեւ Արցախի Հանրապետության լուծարման գործընթացով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ առաջիկայում հերթը հասնում է Արցախի Հանրապետության նախագահ Սամվել Շահրամանյանին, որին եւս նախաքննական մարմինը խիստ հարցադրումներ ունի: Նկատենք, որ արդեն մեկ քրեական գործ կա, որ քննում է Քննչական կոմիտեն: Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանի հնչեցրած հայտարարությունների ու հաղորդման հիման վրա՝ քրեական գործ է հարուցվել: Վարույթը նախաձեռնվել է երկու հոդվածներով՝ Քրեական օրենսգրքի 550 հոդվածով («Զինվորական պաշտոնեական անփութությունը», որը սահմանում է՝ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում հրամանատարի կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) եւ Քրեական օրենսգրքի 550 հոդվածով («Մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը», որը սահմանում է՝առանց մարտի հանգամանքներով հարկադրված լինելու հրամանատարի (պետի) կողմից ամրությունը, մարտական տեխնիկան կամ մարտ վարելու այլ միջոցը հակառակորդին հանձնելը կամ թողնելը): Կարճ ասած, հող են նախապատրաստում քաղաքական իշխանությունները, որ Բաքվի բանտից եթե Արցախի 3 նախագահները Հայաստան գան, Հայաստանում անմիջապես կալանավորվեն: Ավելին՝ չի բացառվում, որ ԱԱԾ-ի կողմից առաջիկայում կալանավորումներ սկսվեն: Հանրայինին տված իր հարցազրույցում Սամվել Բաբայանը հայտարարել էր, թե ինքը քողարկված բանակցություններ է վարել Ադրբեջանի հետ, ավելին՝ինչպես ինքը հայտարարեց, որոշ հարցերի շուրջ արդեն համաձայնության են եկել Ադրբեջանի հետ: «Մենք Ադրբեջանի հետ պայմանավորվել էինք ավտոնոմ ռեսպուբլիկայի շուրջ, կետ առ կետ գրած էր (23 կետ): Ադրբեջանը համաձայնել էր»,-ասել էր Բաբայանը: Նա նաեւ ասել էր, որ Արցախի 3 նախագահներն էլ պետք է կալանավորվեն, ու հենց այդպես էլ արեց Բաքուն:

Հայաստանում կրթական ոլորտը վերջերս հաճախ է հայտնվում սկանդալների մեջ: Սկզբում ԿԳՄՄՆ-ի կողմից նոր գրքերի տպագրության գործընթացի անհաջող ընթացքն էր, իսկ այժմ նախարար Ժաննա Անդրեասյանի երեխաների՝Գերմանիայում սովորելն է քննարկման կիզակետում: 2018 թվականին, երբ ՔՊ-ականները նոր էին եկել իշխանության, հայտարարում էին, որ ամոթալի է, երբ նախարարի երեխաները, սեփական երկրում սովորելու փոխարեն, ուսանում են այլ երկրներում: Հիշեցնենք, որ հենց այդ ժամանակահատվածում Նիկոլ Փաշինյանի դուստրը եւ որդին՝Մարիամ եւ Աշոտ Փաշինյանները, սովորում էին Էստոնիայում գտնվող Տարտուի համալսարանում: Արայիկ Հարությունյանը բոլոր հնարավոր բեմահարթակներից հնչեցնում էր, որ նախկինների երեխաները սովորում են արտասահմանյան բուհերում: Ժաննա Անդրեասյանի երեխաներն էլ ցանկություն են հայտնել սովորել Գերմանիայում: Իշխանության համար դա նրանց երեխաների իրավունքն է: Իշխանականները քարկոծում էին նախկիններին, սակայն այս աղմուկին մոռանում են ավելացնել նաեւ, որ ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի դուստրը՝Արփի Հովհաննիսյանը եւս սովորում է արտասահմանում, ավելի կոնկրետ՝Պրահայի ճարտարապետության ինստիտուտում: Ըստ նախարար Հովհաննիսյանի հայտարարագրի՝նրա՝ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը կազմել է 7 հազար 424 եվրո, որը համարժեք է 3 մլն 157 հազար դրամի: Սեփական բծերը չտեսնող իշխանությունները քարկոծում էին նախկինների երեխաներին, բայց այսօր փաստացի հեղափոխական իշխանության պարագլուխ Նիկոլ Փաշինյանի դուստրը՝Շուշան Փաշինյանը եւս սովորում է արտասահմանում: Հայկական կրթական համակարգը, որտեղ առանց դասագրքերի են ուսանում, հենց նախարար Ժաննա Անդրեասյանի ստեղծած քաոսն է:

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ Երեւանի թաղապետերի պաշտոնները դարձել են լուրջ կռիվ իշխանության եւ «Հանրապետություն» կուսակցության միջեւ, քանի որ իշխանությունը, համագործակցային դաշինք ունենալով «Հանրապետություն» կուսակցության հետ, պետք է նրանց էլ բաժանի թաղապետերի պաշտոններ: Նախապես որոշված էր, որ 3 թաղապետ պետք է լքի պաշտոնը եւ հեռանա, եւ այդ պաշտոններին պետք է նշանակվեն «Հանրապետություն» կուսակցության անդամները: Այժմ Մալաթիա-Սեբաստիա,Դավթաշեն եւ Նոր Նորք վարչական շրջանների այդ 3 ՔՊ-ական թաղապետերը մեծ բունտ են անում Ավինյանի մոտ, որ սա արդար քայլ չէ իրենց նկատմամբ, քանի որ իրենք իշխանության կողքին կանգնել եւ աջակցել են նրանց ամենավատ ժամանակաշրջանում, եւ հիմա ստիպում են լքել իրենց պաշտոնները: Ամենավատ վիճակում գտնվում է Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարը՝Ռոման Համբարձումյանը, որովհետեւ իր շրջապատում թաղապետը հպարտորեն ասել էր, որ նա խնդիր չունի Տիգրան Ավինյանի հետ, իսկ ընտրություններից հետո այդ պաշտոնը ավելի կամրապնդի, իսկ այժմ նրա գլխին սեւ ամպեր են կուտակվել: Այս թեժ քննարկումները շարունակվում են Նոր Նորքի թաղապետ Արմեն Միրոյանի եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թաղապետ Արման Բարխուդարյանի շուրջ եւս: Իրավիճակը թեժ է, բայց իշխանությունը տարբերակ չունի եւ պետք է այս պաշտոնները տա «Հանրապետություն» կուսակցությանը: Հիշեցնենք, որ նախնական որոշված է, որ «Հանրապետություն» կուսակցությանը տրվելու է Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը, որը ղեկավարելու է Ռոմիկ Մխիթարյանը: Վերջինս, ըստ մեր տեղեկությունների, սպարապետ Վազգեն Սարգսյանի մտերիմներից է եղել, պատերազմի մասնակից է: Նրա տեղակալ նշանակվելու է Վաչե Վանյանը, որը եւս նույն կուսակցությունից է: Դավիթաշենը եւս կղեկավարի «Հանրապետություն» կուսակցությունը, դեռեւս որոշում են, թե ով, իսկ Նոր Նորքը՝Տիգրան Տեր-Մարգարյանը: Նաեւ սեւ ամպեր են կուտակվել Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանի գլխին, քանի որ որոշված է Կենտրոնի թաղապետ նշանակել Նուարդ Վարդանյանին:

ԶՐՈՒՅՑ

Ի՞ՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը խաղաքաղաքական ընտրությունը բոյկոտելու, մանդատները վերցնելու եւ ավագանիում իրենց առաջիկա քայլերի մասին զրուցել է ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանի հետ:

-Պարոն Գրիգորյան, «Ազգային առաջընթաց»-ը բոյկոտեց քաղաքապետի ընտրությունների ավագանու նիստը, որպեսզի արտահերթ ընտրությունների ճանապարհով գնաք, սակայն այդպես էլ Ձեր պայքարն ու բոյկոտը որեւէ արդյունք չտվեց: Ի վերջո, իշխանության թեկնածուն՝ Տիգրան Ավինյանը, ընտրվեց քաղաքապետ: Չե՞ք կարծում, որ ձեր բոյկոտն ու քայլերը անիմաստ էին եւ որեւէ արդյունք չտվեցին, եւ պետք էր այլ մեխանիզմներ մտածել:

-Չեմ կարծում, որ անիմաստ էին. որ արդյունք չտվեցին, չէր նշանակում, որ քայլն անիմաստ էր, մենք շատ հստակ ու հրապարակային ենք արել քայլերը: Դա մեր վերջին քայլն էր, որովհետեւ կար հնարավորություն, պարզապես այդ հնարավորությունից ընդդիմադիր երրորդ ուժը չօգտվեց, այսինքն՝ այստեղ մեր մեղավորությունը կամ ձախողումը չէր, եւ դա, կարծում եմ, մեր ընտրողներին, հանրությանը պարզ էր, եւ ամեն ինչ արվում էր հանրային ձեւով: Քանի որ հավաքական ընդդիմությունը ուներ ավելի շատ ձայն, քան իշխանական թեւը, մենք առաջարկել էինք առաջին տարբերակը, որ չգնան եւ չապահովեն քվորում: Այդ կոչին ոչ բոլորը հետեւեցին եւ գնացին, եւ մենք դրա մասին տեղյակ լինել չէինք կարող, հետեւաբար մենք սպասել էինք զարգացումներին եւ տեսանք արդյունքը: Կարծում եմ՝ մեր քայլերը տրամաբանական են եղել:

-Ընդդիմադիր ուժերը, մասնավորապես՝ «Հանրային ձայն»-ը, սլաքները դեպի ձեզ է ուղղում, մասնավորապես՝ Հայկ Մարությանին՝ ասելով, որ իրենք ի սկզբանե կողմ են եղել գնալ եւ կողմ քվեարկել նրա օգտին, բայց նա որեւէ կերպ չի արձագանքել, քննարկումների չի եկել, չկողմնորոշված էր: Չե՞ք կարծում, որ հենց այս ամենն էր պատճառը, որ, ի վերջո, ձեզ չհաջողվեց Հայկ Մարությանի թեկնածության շուրջ կոնսենսուսի գալ:

-Դա ոչ թե իրենց կամ մեր գնահատականն է, այլ փաստ է, որ իրենք անհրաժեշտ երկու ձայն չունեին, որոնք մենք ի սկզբանե կարծում էինք, որ ընդդիմությունը ունի հավաքական ձայն, քանի որ երկու հոգի ֆիզիկապես չէին կարողանալու ներկա լինել ավագանու ընտրություններին այդ օրը, հետեւաբար անիմաստ էր նույնիսկ այդ խոսակցությունը, որ եթե բոլորով ձայն տանք մեր թեկնածուին, ապա նա կդառնա քաղաքապետ: Մենք դա իմացանք ավելի ուշ, քանի որ մենք կարծում էինք, որ առաջին եւ երկրորդ համարները կհրաժարվեն մանդատից, եւ նոր անձինք կփոխարինեն նրանց՝ ըստ հերթականության: Դա տեղի չունեցավ սեպտեմբերի 28-ին. դա վերջին օրն էր, երբ կարող էին մանդատից հրաժարվել: Հայտնի դարձավ, որ բոլոր խոսակցությունները փուչ էին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԶԲԱՂՎԵԼՈՒ Է ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Միջազգային գործընկերներիս հետ գրավոր եւ բանավոր հաղորդակցությունների ժամանակ շարունակում եմ բարձրացնել հայ գերիների խնդիրը՝ հիշեցնելով, որ 2020թ.-ից սկսած՝ մինչ օրս, Ադրբեջանը Հայաստանի եւ Արցախի քաղաքացիներին տարբեր իրավիճակներում գերեվարում է:

Ադրբեջանը, կոպտորեն ոտնահարելով թե՛ միջազգային իրավունքի սկզբունքները, թե՛ ստանձնած միջազգային պարտավորությունները, շարունակում է Բաքվի բանտերում պահել հարյուրավոր ռազմագերիների եւ ապօրինաբար առեւանգված Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարներին, քաղաքացիական անձանց:

Միջազգային գործընկերներիս ուղղված գրություններում շեշտել եմ, որ, օրինակ, Վագիֆ Խաչատրյանին հասցեագրվող մեղադրանքները՝ արցախյան առաջին պատերազմի ընթացքում կատարած հանցագործությունների վերաբերյալ, ամբողջովին կեղծ են, եւ խնդրել եմ առարկայական ճնշումներ գործադրել Ադրբեջանի վրա քաղաքացի Վագիֆ Խաչատրյանին եւ մեր մյուս հայրենակիցներին Բաքվի բանտերից դուրս բերելու եւ հայրենիք վերադարձնելու ուղղությամբ:

Շարունակելու եմ մշտապես զբաղվել գերեվարված հայրենակիցների վերադարձի հարցով այնքան ժամանակ, քանի դեռ հարցն իր արդարացի եւ ամբողջական լուծումը չի գտել:

Բոլոր իմ գործընկերներին հիշեցնում եմ, որ քանի դեռ Ադրբեջանի նկատմամբ գործուն պատժամիջոցներ չեն կիրառվել, նա շարունակում է նորանոր հանցանքներ գործել»:

ՊԵՏՔ Է ԱՄԱՉԻ

Ֆրանսիայի հասցեին այս անգամ բավականին կոշտ է խոսել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Բաքվի նախաձեռնող խմբի կողմից կազմակերպված «Նեոգաղութատիրություն. մարդու իրավունքների խախտում եւ անարդարություն» միջազգային համաժողովի մասնակիցներին ուղղված իր ուղերձում: Նա Ֆրանսիային հորդորել է ամաչել, քանի որ արյունալի հանցագործություններով հարուստ պատմություն ունի:

«Այսօր այստեղ ներկայացված որոշ անհատներ ենթարկվում են ճնշման եւ խտրականության, տարբեր ձեւերով ռասիստական հարձակումների: Ֆրանսիայի կառավարությունը, որը պետք է պայքարի երկրի ներսում նման անհանգստացնող եւ վտանգավոր միտումների դեմ, փորձում է այլ պետությունների դասախոսություններ կարդալ, միջամտել ներքին գործերին: Մալիից, Նիգերից եւ Բուրկինա Ֆասոյից ֆրանսիական զորքերի վերջին դուրսբերումը եւս մեկ անգամ ցույց տվեց, որ Աֆրիկայում անխիղճ նեոգաղութատիրության Ֆրանսիայի քաղաքականությունը դատապարտված է ձախողման:

Ֆրանսիան, որը պետք է ամաչի իր գաղութային պատմության համար, որը հարուստ է արյունալի հանցագործություններով, եւ կատարած վայրագությունների համար ներողություն խնդրելու փոխարեն, խոսում են այլ երկրների ֆիկտիվ էթնիկ զտումների մասին»,- նշել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

Վերջում Ադրբեջանի նախագահը հավելել է, որ Ֆրանսիայում տեսնում են համատարած ռասիզմ եւ իսլամաֆոբիա:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔՊ–Ն ՊԱՍԻՎԱՑԵԼ Է

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն արդեն մեկ ամսից ավել է՝ կուսակցական հավաքներ չի անցկացնում, մինչդեռ մինչեւ Արցախի կորուստը իշխող ուժը ամենշաբաթյա ռեժիմով՝ երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին, վարչության եւ նախաձեռնող խմբի նիստեր էր անում՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:

Այսպիսով, ՔՊ-ն վերջին անգամ վարչության նիստ արել է ավագանու ընտրությունների հաջորդ օրը՝ սեպտեմբերի 18-ին, որի ընթացքում քննարկվել էին ավագանու ընտրություններում կրած պարտության պատճառները, իսկ նախաձեռնող խմբի նիստ՝ օգոստոսի 3-ին:

«Ժողովուրդ» օրաթերթը ՔՊԿ վարչության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանից հետաքրքրվեց՝ ինչու վարչության եւ նախաձեռնող խմբի նիստերը չեն կայանում: «Աշխատանքային քննարկումներ ենք ունեցել բազմաթիվ, պայմանավորված է նաեւ աշխատանքային ծանրաբեռնվածությամբ: Ինչպես գիտեք, հատկապես մեր գործադիրի անդամները մեծ ծանրաբեռնվածություն ունեն՝ կապված ԼՂ-ից բռնի տեղահանված քաղաքացիների հումանիտար կարիքները հոգալու հետ: Սրան զուգահեռ՝ կուսակցության տարածքային կառույցներում թե՛ խորհրդի, թե՛ նախաձեռնող խմբի նիստեր լինում են»,- ասաց նա:

Հետաքրքրվեցինք նաեւ՝ արդյոք Նիկոլ Փաշինյանի հետ վարչության անդամների հանդիպում նախատեսվում է՝ հաշվի առնելով, որ վերջինս նոր է վերադարձել տարբեր երկրներում հանդիպումներից:

«Վարչապետի հետ հանդիպումները կրում են սիստեմատիկ բնույթ, պարբերաբար տեղի են ունենում: Այս պահին Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպում չկա նշանակված, բայց դրանք հաճախակի բնույթ են կրում»,- ասաց Ալեքսանյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿՈՐՈՇԵՆ

Հայաստանը Իրանից ստացել է «3+3» ձեւաչափով (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան-Ռուսաստան, Թուրքիա, Իրան) արտաքին գործերի նախարարների մակարդակով հանդիպման հրավեր: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ լրագրողների հետ ճեպազրույցում այս մասին հայտարարեց Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը: «Գիտեք, որ հնարավոր հանդիպումը պետք է տեղի ունենա Թեհրանում, եւ մենք իրանական կողմից ստացել ենք հրավեր: Այս պահին իրանական կողմի մեր գործընկերների հետ քննարկումներ են տեղի ունենում, եւ երբ վերջնական որոշում կլինի, այդ մասին կհայտարարվի»,- ասաց Կոստանյանը: Ադրբեջանական լրատվամիջոցները, հղում անելով դիվանագիտական աղբյուրներին, հայտնել էին, որ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի, Ռուսաստանի եւ Իրանի արտգործնախարարները առաջիկայում կհանդիպեն Թեհրանում: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հոկտեմբերի 10-ին Հանրային հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարել էր, որ Երեւանը պատրաստ է այդ ձեւաչափով հանդիպումներին:

ԻՐԱՎԻՃԱԿ

Ո՞Վ Է ՈՒՂՂՈՐԴԵԼ

Սամվել Բաբայանը մի խումբ արցախցիների երեկ ուղղորդել էր դեպի Արցախի Հանրապետության ներկայացուցչություն: Լարված իրավիճակ էր Հայաստանում Արցախի ներկայացուցչության դիմաց: Արցախից բռնի տեղահանված քաղաքացիները բողոքի ակցիա էին անցկացնում՝ Սամվել Շահրամանյանից պահանջելով իրենց աշխատավարձերը, թոշակներն ու սոցիալական աջակցությունները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ բողոքի ակցիան նախաձեռնել է Արցախի անվտանգության նախկին քարտուղար Սամվել Բաբայանը: Նրա դրդմամբ՝ քաղաքացիները Շահրամանյանին անպատվում են եւ հնչեցնում, որ նա Հայաստանի իշխանությունների սրտով ղեկավար չէ, ու ինքը պետք է հրաժարական տա ու հեռանա: Ըստ մեր տեղեկությունների՝ Սամվել Բաբայանը այս իրավիճակը ստեղծել է, որպեսզի Արցախի դեռ գոյություն ունեցող կառավարական համակարգի ղեկն իր ձեռքը վերցնի: Բաբայանը նպատակ է հետապնդում ղեկավարել Արցախի կառավարությունը եւ այն ֆինանսական միջոցները, որոնք բերվել են Արցախից եւ ուղղվում են ողջ աշխարհից Արցախի հումանիտար խնդիրների համար: Հիշեցնենք, որ Սամվել Բաբայանը Նիկոլ Փաշինյանի նախընտրելի տարբերակն է՝ որպես Արցախի ղեկավար, եւ ԱԺ պաշտպանության հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի հետ Բաբայանը ամեն օր նոր սցենարներ է գծում, թե ինչպես գահընկեց անեն Արցախի վտարանդի կառավարության ղեկավարներին: ԱՀ նախագահ Սամվել Շահրամանյանի հետ մինչեւ այսօր ՀՀ իշխանություններից գրեթե ոչ ոք կապի դուրս չի եկել, չի ընդունել:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԳԱԶԱՅՈՒՄ

Հունաստանի արտաքին գործերի նախարարությունը «խորապես սգում է» Գազայի հատվածում՝ Սուրբ Պորֆիրիոս վանքին հարող շենքի վրա հարձակման հետեւանքով զոհվածների համար: Հինգշաբթի երեկոյան տեղեկություններ հայտնվեցին, որ Գազայի հատվածում գտնվող Սուրբ Պորֆիրիոս հունական ուղղափառ եկեղեցին ավերվել է իսրայելական ռմբակոծությունների հետեւանքով, ինչի հետեւանքով կան զոհեր եւ վիրավորներ:

«Մեր խորը վիշտն ենք հայտնում Գազայի հատվածում՝ Սուրբ Պորֆիրի վանքին հարող շենքի վրա հարձակման հետեւանքով զոհվածների համար»,- ասվում է Հունաստանի ատաքին գործերի նախարարության հայտարարության մեջ:

«Քաղաքացիների պաշտպանությունը եւ պաշտամունքի վայրերի եւ կրոնական հաստատությունների անվտանգությունը պետք է ապահովվի եւ հարգվի բոլոր կողմերից»,- ասել է Աթենքը:

Al-Jazeera հեռուստաալիքի փոխանցմամբ՝ հարվածի հետեւանքով զոհվել է ութ մարդ, կան վիրավորներ:

Տիբերիայից արքեպիսկոպոս Ալեքսիոսը, հունական հեռուստաընկերությանը հարցազրույց տալով, հայտնել է, որ հարվածը հասցվել է վարչական շենքին եւ վանքի մուտքին, «նրանց ուղղությամբ հրթիռ են արձակել, եւ ամբողջ շենքը փլուզվել է»:

«Ներսում շատ քրիստոնյաներ կային, որոնցից շատերը վիրավորվեցին, եւ մենք ունենք նաեւ մահացածներ»,- ասաց արքեպիսկոպոսը՝ հավելելով, որ վանքում ավելի քան 400 մարդ կար:

Երուսաղեմի պատրիարքարանը դատապարտել է իր եկեղեցու վրա հարձակումը եւ այն որակել որպես ռազմական հանցագործություն:

ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ

ԼԱՎՐՈՎԸ՝ ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը՝ Россия-1 հեռուստալիքի 60 минут ծրագրի եթերում նշել է, որ ԱՄՆ-ն կարող է արբանյակային պատկերներ տրամադրել Գազայի հատվածում գտնվող հիվանդանոցի վրա հարձակման մասին, այլ ոչ թե փորձել դրանցով պատկերել Ռուսաստանի եւ ԿԺԴՀ-ի միջեւ ռազմական համագործակցությունը:

«Հիմա, երբ բոլորը քննարկում են Գազայի ողբերգությունը, որտեղ հարձակվել են հիվանդանոցի վրա, հարյուրավոր մարդիկ զոհվել են, հարյուրավոր մարդիկ վիրավորվել են, մենք կարող ենք ամերիկացիներից խնդրել նաեւ արբանյակային տվյալներ, քանի որ նրանք արբանյակներով ճշգրիտ վերահսկում են այս տարածքը: Նման հարձակումը չէր կարող աննկատ մնալ: Պետք է դեպի քեզ «շրջվել», այդ դեպքում գուցե աշխարհն ավելի հանգիստ լինի»,- խորհուրդ է տվել Լավրովը:

Նրա խոսքով՝ Ռուսաստանը հավատարիմ է 1967 թվականի սահմաններում Պաղեստին պետության ստեղծման անհրաժեշտության մասին Անվտանգության խորհրդի որոշումներին: «Մենք հավատարիմ ենք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումներին, որոնք ոչ ոք չի չեղարկել եւ ոչ ոք չի հրաժարվել: Այդ բանաձեւերը ենթադրում են պայմանավորվածություններ ձեռք բերել պաղեստինյան պետության ստեղծման շուրջ՝ հիմնված 1967 թվականի սահմանների վրա, որի մայրաքաղաքը Արեւելյան Երուսաղեմն է», - ասել է նա. փոխանցում է РИА Новости-ին:

«Բոլորը գիտեն, որ Իսրայելը, այսպես կոչված, բնակավայրերի ընդլայնմանն ուղղված իր միակողմանի գործողություններով խախտում է այս բանաձեւը»,- հավելել է Լավրովը:

Հավելենք, որ Իսրայելի պաշտպանության բանակը (ԻՊԲ) առավոտյան տեղեկագրում հայտնել է, որ խոցել է պաղեստինյան «ՀԱՄԱՍ» արմատական շարժմանը պատկանող ավելի քան 100 թիրախ: ԻՊԲ-ի հաղորդագրության մեջ նշվում է, որ սպանվել է հոկտեմբերի 7-ին Իսրայելի դեմ հարձակմանը մասնակցած «ՀԱՄԱՍ»-ի զինյալ, չեզոքացվել է նաեւ «ՀԱՄԱՍ»-ի ջոկատ:

Խոցված օբյեկտների շարքում են ստորգետնյա թունել, զենքերի պահեստներ, տասնյակ հրամանատարական կենտրոններ: ԻՊԲ-ն հայտնում է նաեւ Ջաբալիայի շրջանում մզկիթներից մեկում գտնվող զենքերի ոչնչացման մասին:

Ավելի վաղ ՋԼՄ-ներում տեղեկություններ են տարածվել Գազայի հունական եկեղեցու մերձակայքում գտնվող շենքին հասցված հարվածի մասին, որի հետեւանքով վնասվել է նաեւ 12-րդ դարի եկեղեցու ճակատային հատվածը:

Ըստ BBC-ի՝ «ՀԱՄԱՍ»-ը հայտնել է, որ եկեղեցու մոտ պայթյուն է տեղի ունեցել հոկտեմբերի 19-ին. եկեղեցում պատսպարված էին օթեւան փնտրող բազմաթիվ քրիստոնյաներ: Ըստ «ՀԱՄԱՍ»-ի՝ պայթյունը լուրջ վնասներ է հասցրել, բազմաթիվ մարդիկ վիրավորվել են:

ԻՊԲ-ն հայտնել է, որ կործանիչները հարվածել են հրամանատարական կենտրոնին, որտեղից Իսրայելի ուղղությամբ հրթիռներ էին արձակվում, եւ դրա հետեւանքով վնասվել է տարածքում գտնվող եկեղեցու պատը:

Հույն ուղղափառ եկեղեցու պատրիարքությունը դատապարտել է եկեղեցու գնդակոծությունը՝ հայտնելով, որ «եկեղեցիները եւ դրա հաստատությունները թիրախավորելը պատերազմական հանցագործություն է»:

Հոկտեմբերի 7-ին պաղեստինյան արմատական «ՀԱՄԱՍ» շարժման կողմից Իսրայելի վրա իրականացված հարձակումներից հետո Իսրայելը պատերազմ է հայտարարել եւ սկսել է գնդակոծել Գազայում տարբեր թիրախներ: Հարվածներ են հասցվում նաեւ Լիբանանում «Հեզբոլլահ» արմատական կազմակերպության թիրախներին: Պաղեստինյան կողմում զոհերի թիվը շուրջ 3800 է, վիրավորների թիվը՝ 13 000: Իսրայելական կողմում կա 1400 զոհ, ավելի քան 4500 վիրավոր: Շուրջ 200 մարդ պատանդ է վերցվել «ՀԱՄԱՍ»-ի կողմից Իսրայելում բանտարկված պաղեստինցիների հետ փոխանակման նպատակով:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԵՏՔ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ

Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, որ Իլհամ Ալիեւն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Ջոշուա Հեքին:

Հանդիպման ընթացքում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը եւս մեկ անգամ հայտնել է իր մտադրությունն Ադրբեջանի տարածաշրջանային խաղաղության օրակարգի, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման եւ խաղաղ պայմանագրի շուրջ բանակցությունների շարունակման վերաբերյալ:

Ադրբեջան նախագահը ավելի վաղ հավելել էր, որ «խաղաղության պայմանագիրը պետք է անհապաղ ստորագրել»:

ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ինչպես հայտնել է կանադական Cable Public Affairs Channel հեռուստաալիքը, Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի Ջոլին կայցելի Հայաստան:

Մելանի Ջոլին նշել է, որ առաջիկա շաբաթների ընթացքում կայցելի Հայաստան: Նախատեսվում է, որ այցի ընթացքում հանդիպումներ կունենա պաշտոնյաների հետ: Նրանք կքննարկեն տարածաշրջանային հարցեր:

ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԸ

Արցախի տեղեկատվական շտաբը հայտարարություն է տարածել, որում ասվում է, որ որ Արցախից բռնի տեղահանվածներին աջակցության, այդ թվում՝ առողջապահական, կրթական, սոցիալական օգնության եւ համանման այլ հարցերով աշխատանքները շարունակում է համակարգել Հայաստանի Հանրապետության կառավարության Հումանիտար կենտրոնը:

«Առաջացող բոլոր հարցերի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով կարող եք զանգահարել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության շուրջօրյա գործող թեժ գիծ՝ 114 հեռախոսահամարով, կամ դիմել Միասնական սոցիալական ծառայության տարածքային (մարզային) կենտրոններ:

Ելնելով վերոգրյալից՝ Երեւանի Խ. Աբովյան 9 հասցեում գործող Արցախի օպերատիվ շտաբը կդադարեցնի աշխատանքները»:

ՄՈՒՏՔԸ ԿԱՐԳԵԼՎԻ

Երեւանի քաղաքապետարանի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը սոցցանցի իր էջում հայտնել է. «Կից ներկայացվող սխեմայի համաձայն՝ քաղաքապետարանի նախաձեռնությամբ Երեւանի նշված հատվածներում առաջիկայում կարգելվի 1.5 տ առավելագույն բեռնվածությամբ բեռնատարների մուտքը:

Արգելքը կգործի առավոտյան ժամը 7:00-ից մինչեւ երեկոյան 21:00:

Ճանապարհային նշաններին չենթարկվելն առաջացնում է տուգանք՝ 5000 ՀՀ դրամի չափով՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124-րդ հոդվածի»:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԵՆ ՕԺԱՆԴԱԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ քննչական կոմիտեից տեղեկացնում են, որ ավարտվել է դեռեւս 2019թ. Նորատուս գյուղի բնակչի՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը՝ 2 մեղադրյալի մասով:

2019թ. նոյեմբերի 2-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, քննությամբ ինքնությունը դեռեւս չպարզված անձն իր մոտ ապօրինի գտնվող ինքնաձիգից կրակահերթ էր արձակել Նորատուսի բնակչի՝ Սեւան-Մարտունի ավտոճանապարհով երթեւեկող «ՈՒԱԶ» մակնիշի մեքենայի ուղղությամբ, ինչի հետեւանքով վերջինս մահացել էր, իսկ մեքենայում գտնվող նրա համագյուղացին՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Իրականացված քննչական անհրաժեշտ գործողությունների եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել են դեպքի էական մի շարք հանգամանքներ:

Մասնավորապես, պարզվել է, որ Երեւանի բնակիչներ Հ.Մ-ն եւ Հ.Դ.-ն քննությամբ ինքնությունը դեռեւս չպարզված անձի հետ համաձայնության են եկել վրեժխնդրության շարժառիթով 40-ամյա տղամարդու սպանության իրականացման շուրջ: Հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով անհայտ անձը ապօրինի կերպով ձեռք է բերել ու պահել հրազեն հանդիսացող ինքնաձիգ: Հ.Դ.-ն նրան, որպես հանցագործության կատարման միջոց, Հ.Մ.-ի միջոցով տրամադրել է «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենա, որը Հ.Դ.-ն վերցրել էր Երեւան քաղաքի մի բնակչից մեկ այլ անձի վարձույթով տրամադրելու պատրվակով:

Այնուհետեւ վարույթով դեռեւս չպարզված անձինք նշված ավտոմեքենայով Երեւան քաղաքից մեկնել են Գեղարքունիքի մարզ, որտեղ՝ Սեւան-Մարտունի ավտոճանապարհի Նորատուս համայնքի մոտակայքում, դարանակալել եւ սպասել են 40-ամյա տղամարդուն:

«ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենայով երթեւեկելու ընթացքում իրենց վարած ավտոմեքենայով հետեւելով վերջինիս՝ ժամը 09:30-ի սահմաններում վազանցել են այն, եւ անհայտ անձը «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայի տանիքի հատվածում առկա դիտանցքից իր մոտ առկա ինքնաձիգից կրակահերթ է արձակել «ՈՒԱԶ»-ի ուղղությամբ: 40-ամյա տղամարդուն պատճառվել է կյանքի հետ անհամատեղելի, իսկ նրա ուղեւորին՝ թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածքներ:

Հանցանքի կատարումից հետո անհայտ անձինք վերադարձել են Երեւան, որտեղ Հ.Մ.-ն, նախապես խոստացված կերպով օժանդակելով սպանության կատարմանը, «Մերսեդես Բենց»-ի վրա գտնվող կրակոցի արգասիքները վերացնելու նպատակով այն տվել է լվացման:

Բացի այդ, Հ.Դ.-ն ավտոմեքենան լվացել է Երեւանի մեկ այլ ավտոլվացման կետում դրա վրա առկա հետքերն իսպառ վերացնելու՝ հանցանքի նախապես խոստացված պարտակում կատարելու նպատակով:

Ձեռք բերված բավարար փաստական տվյալների հիման վրա՝ Հ.Մ.-ին եւ Հ.Դ.-ին վերջնական մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:

Հիշյալ 2 մեղադրյալների մասով նախաքննությունն ավարտվել է, եւ նրանց մասով վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու նպատակով:

Ձեռնարկվում են միջոցառումներ ինչպես սպանությունը կատարած, այնպես էլ դրա կատարմանն օժանդակած այլ անձանց ինքնությունները պարզելու, հայտնաբերելու եւ պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՄԵԽ Է ԿՈՒԼ ՏՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ուշագրավ դեպք է տեղի ունեցել Վանաձորի բանտում:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ 1988 թվականի ծնված տղամարդուն օտար մարմնի ստամոքսաաղիքային տրակտի ախտանիշով տեղափոխել են Վանաձորի հիվանդանոց:

Պարզվել է, որ տղամարդը բանտում մեխ է կուլ տվել: Բժիշկներն օգնել են կալանավորին, նրա կյանքին վտանգ չի սպառնում:

ՕՐԵՆՔ Է ԽԱԽՏԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Սերյոժա Թաթուլի Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել: Նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանումում, ենթակա է եղել զորակոչման 2022թ. ձմեռային զորակոչին:

Նա խախտել է «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, խուսափել է հայտարարված պարտադիր զինվորական ծառայության 2022թ.-ի ձմեռային զորակոչից այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության պայմաններում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՎԱՎԵՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Հանցավորության դեմ համատեղ միջոցների միջպետական ծրագրի շրջանակներում, Քրեական ոստիկանության գլխավոր վարչության համակարգմամբ, տարածքային ստորաբաժանումների հետ նրանց սպասարկման տարածքներում պարբերաբար իրականացվում են անօրինական միգրացիայի հակազդմանն ուղղված միջոցառումներ:

Հերթական համատեղ միջոցառումն անցկացվեց ոստիկանության Կոտայքի բաժնի ծառայողների հետ: Ստուգայցեր կատարվեցին սպասարկվող տարածքի հյուրանոցներում, օտարերկրացիների վարձակալած բնակատեղիներում: Հայտնաբերվեցին ու Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության անձնագրերի եւ վիզաների վարչության Կոտայքի անձնագրային բաժանմունք ներկայացվեցին Հայաստանում առանց վավերական արտոնագրի, կացության կարգավիճակի եւ անվավեր փաստաթղթերով շուրջ երկու տասնյակ անձինք: Նրանց նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտման համապատասխան արձանագրություններ:

Նմանատիպ միջոցառումները շարունակվում են:

ԿԱՐԵՎՈՐ

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է 22–ԱՄՅԱ ԲՆԱԿԻՉԸ

2023թ. հոկտեմբերի 16-ին «Ալավերդի բժշկական կենտրոն»-ից ՀՀ ՆԳՆ ոստիկանության Թումանյանի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ Լոռու մարզի Աքորի գյուղում՝ տներից մեկի դիմաց, մահացած անձ կա. վերջինս նույն տան բնակիչ 50-ամյա Ա.Ս.-ն է, որի մարմնի արտաքին զննությամբ հայտնաբերվել են կտրած-ծակած վերքեր: Դեպքի առթիվ 2023թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Կատարվել է դեպքի վայրի զննություն, հարցաքննվել են դեպքին ականատես անձինք: Վերցվել են նմուշներ, նշանակվել են դատաբժշկական, դատահետքաբանական փորձաքննություններ: Ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ 16.10.2023թ.՝ ժամը 21:00-ի սահմաններում՝ Աքորի գյուղի 2-րդ փողոցում երթեւեկելիս, խափանվել է նույն գյուղի 22-ամյա երիտասարդի կողմից վարած «Վազ 2106» մակնիշի ավտոմեքենան: Ճանապարհի բանուկ մասում մեքենան կայանելու առիթով վիճաբանություն է առաջացել նշված փողոցով իր անձնական օգտագործման «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայով երթեւեկել ցանկացող, նույն գյուղի 50-ամյա բնակչի եւ նշված 22-ամյա երիտասարդի հոր՝ 45-ամյա բնակչի միջեւ: Դրա ընթացքում, ըստ առկա տվյալների, 50-ամյա տղամարդու կողմից հնչել են սեռական բնույթի հայհոյանքներ, նշված երկու անձինք բռունցքներով փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց:

Դեպքին միջամտել է 45-ամյա տղամարդու որդին, որը, «Վազ 2106» ավտոմեքենայի սրահից վերցնելով սուր կտրող առարկա, Ա.Ս.-ին կյանքից զրկելու դիտավորությամբ երեք անգամ հարվածել է վերջինիս ձախ թիկնային հատվածին, կրծքավանդակի առաջային մակերեսի աջ հատվածին եւ սպանել նրան, որից հետո դիմել է փախուստի: Նույն օրը՝ ժամը 01:30-ին, 22-ամյա երիտասարդը հայտնաբերվել է իրենց տանը եւ տեղափոխվել ոստիկանության Թումանյանի բաժին, ապա ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին: Քննիչի որոշմամբ՝ վերջինս ձերբակալվել է՝ վերոնշյալ հանցագործությունը կատարելու մեջ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածանքի հիմքով:

Քննությամբ պարզվել է, որ դեպքի պահին ինչպես 22-ամյա երիտասարդը, այնպես էլ տուժողը եղել են ալկոհոլի ազդեցության տակ:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ Աքորի գյուղի 22-ամյա բնակչի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով (սպանություն) եւ 344-րդ հոդվածի 2-րդ մասով (Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելը): Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ վերջինիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է, եւ մեղադրյալը կալանավորվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 18-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 67 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՔՍԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ Է

Երեւանի բնակիչ, 1973թ. ծնված Մանվել Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2014թ. մայիսի 23-ին մինչեւ 2016թ. մարտի 18-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության Գուգարքի տարածաշրջանային մաքսատան Բագրատաշենի մաքսային բաժանմունքի պետի պաշտոնը, հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներով օժտված, պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, անձնական շահագրգռվածությունից ելնելով, իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, դիտավորությամբ խոչընդոտել է «Կապիտալ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ՌԴ Վոլգոգրադ քաղաքում ձեռք բերված եւ 2015թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ փոխադրված դիզելային վառելիքի հերթական խմբաքանակի մաքսային ձեւակերպմանը, որի հետեւանքով պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս, իսկ «Կապիտալ Ինվեստ» ՍՊԸ-ին՝ անզգուշությամբ ծանր հետեւանքներ առաջացնող գույքային վնաս: Մ. Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 2-րդ մասով, նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: 2023թ. սեպտեմբերի 14-ին Բերդ քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Մարդանյանը վճռել է Մանվել Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 2-րդ մասով եւ նրան դատապարտել ազատազրկման 3 տարի ժամկետով՝ նրան զրկելով ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայությունում 3 տարի ժամկետով պաշտոններ զբաղեցնելու իրավունքից, կիրառել 2018թ. նոյեմբերի 6-ին ուժի մեջ մտած «Էրեբունի-Երեւանի հիմնադրման 2800-ամյակի եւ Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը եւ Մանվել Հովհաննիսյանին ազատել ազատազրկման ձեւով նշանակված պատժի կրումից, Մ. Հովհաննիսյանի նկատմամբ ընտրված «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնել, տուժող «Կապիտալ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը բավարարել ամբողջությամբ, Մ. Հովհաննիսյանից հօգուտ «Կապիտալ Ինվեստ» ՍՊԸ-ի բռնագանձել 8 միլիոն 352 հազար ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետեւանքով անմիջականորեն պատճառված վնասի գումար, Մ. Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Երեւան քաղաքի Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի 3-րդ շենքի թիվ 19 հասցեում գտնվող ավտոտնակի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ մինչեւ սույն դատավճռով քաղաքացիական հայցի կատարումը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐ

ԽՆԴԻՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաները Երեւանի մանկապարտեզներում տեղավորվելու խնդիր ունեն, սակայն մինչեւ իրավիճակի նման փոփոխությունը մայրաքաղաքի 162 մանկապարտեզներում արդեն իսկ կան հերթում սպասող 8300 երեխաներ:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաներին մանկապարտեզներում տեղավորելու խնդիրներին՝ այս մասին նշեց Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի տեղակալ Ելենա Հարությունյանը՝ ընդգծելով, որ խնդիրը հիմնականում վերաբերվում է կրտսեր առաջին տարիքային խմբերին, այսինքն՝ երկու տարեկան երեխաներին:

«Երեւանում իսկապես այս տարիքային խմբում ունենք խնդիր, քանի որ մեր մանկապարտեզներից միայն 70-ի մոտ է ձեւավորված կրտսեր առաջին տարիքային խմբեր, եւ, ի տարբերություն ավելի բարձր տարիքային խմբերի, որտեղ կարող են ընդգրկվել 30 երեխաներ, կրտսեր առաջինում, ըստ նորմատիվների, խմբում կարող է ընդգրկվել 20 երեխա: Սա է հիմնական խնդիրը, որ մենք չենք կարողանում աջակցել 2 տարեկան երեխաներին մանկապարտեզ ներգրավելու գործում: Նաեւ նշեմ, որ 162 մանկապարտեզներից 20-ն այս պահին չեն գործում, որովհետեւ վերանորոգման փուլում են գտնվում: Դրանցից 10-ի շինարարության ավարտը պլանավորվում է այս տարի, որը նույնպես նոր հնարավորություններ կստեղծի»,- նշեց Ելենա Հարությունյանը:

Նա ընդգծեց, որ ինտենսիվ աշխատում են կրթության գերատեսչության հետ ավելի մատչելի ու հասանելի դարձնելու նախադպրոցական կրթությունը, եւ բոլոր դեպքերում առաջնահերթություն տրվելու է այն ընտանիքներին, որոնք բռնի տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից: Սակայն այս պահին քննարկում են, որպեսզի աշխատանքներն իրականացվեն այնպես, որ ոչ մի քաղաքացու իրավունք չխախտվի:

«Պետք է նշեմ, որ այս պահին մանկապարտեզների մյուս տարիքային խմբերում արդեն հաճախում են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների շուրջ 500 երեխաներ»,- հավելեց Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչը:

Խնդրի մասին բարձրաձայնած «Արցախի մայրիկների աջակցման կենտրոն» ՀԿ նախագահ Մարիամ Աբրահամյանը նշեց, որ սեփական երեխաների փորձով հարցին բախվելուց հետո գրառում է կատարել ֆեյսբուքյան իր էջում, որին արձագանքել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մանկահասակ երեխաներ ունեցող մայրիկներ: Ըստ նրա՝ շուրջ 90 տոկոսը բախվել է այդ խնդրին եւ չի կարողացել տեղավորել երեխային:

«Այս հարցը պետք է հնարավորինս շուտ լուծում գտնի, քանի որ ԼՂ-ից բռնի տեղահանվածներին առավել քան շուտ անհրաժեշտ է աշխատել, իսկ երեխաներին՝ առավել քան արագ ինտեգրվել՝ հաշվի առնելով հոգեբանական ծանր ապրումները, որոնց միջով իրենք անցել են»,-ասաց Մարիամ Աբրահամյանը:

Մասնավոր մանկապարտեզների ասոցիացիայի նախագահ Նելլի Խաչատրյանն էլ ընդգծեց, որ իրենց ասոցիացիայում ընդգրկված մանկապարտեզներում այս պահին հաճախում են արդեն իսկ 85 երեխաներ, որոնցից 90 տոկոսը՝ անվճար հիմունքներով, 10-ը՝ բավականին մեծ զեղչերով:

«Չեմ ուզում՝ սա դիտվի խտրականություն, քանի որ մինչեւ այս իրավիճակի ստեղծումը, ինչպես նշեց տիկին Հարությունյանը, 8300 երեխա կա արդեն հերթում, եւ դա նշանակում է, որ 8000 մայրիկ նույնպես սպասում է, որպեսզի իր երեխան օգտվի կրթության իրավունքից: Մենք փորձում ենք եւ կշարունակենք հնարավորինս շատ օգնել, բայց մեր հնարավորությունները, կոնկրետ՝ մասնավոր մանկապարտեզների, անսահմանափակ չեն»,- նշեց Մասնավոր մանկապարտեզների ասոցիացիայի նախագահը:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՍՈՎՈՐԵԼԸ՝ ՄԵՂՔ

2018 թվականին այժմ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը հայտարարեց, որ ԿԳՄՍ նախկին նախարար Արմեն Աշոտյանի երեխաները սովորում են մասնավոր դպրոցում, որը պատվաբեր չէ այս ոլորտի նախարարի համար:

Վերջերս էլ Հայաստանում կրթական համակարգը եւ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հայտնվել են քննարկումների էպիկենտրոնում: Կառավարության նիստից հետո լրագրողների հետ ճեպազրույցում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ասաց, որ նա կարծում է, որ իր երեխաների կրթության իրավունքը, անձնական որոշումների իրավունքը ոչ ոք չի կարող վիճարկել:

Անդրեասյանն այս հայտարարությունն արեց այն բանից հետո, երբ հայտնի դարձավ դստեր՝ Գերմանիայում սովորելու մասին: Ստացվում է այնպես, որ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի կողմից ընդունված եւ տապալված նոր չափորոշիչներն այնքան գոհացնող չեն, որ սեփական երեխային այդ համակարգում չի տեղավորում:

Նախկինում Արայիկ Հարությունյանը մեղադրում էր Արմեն Աշոտյանին, որ նրա երեխաները սովորում են «Այբ» կրթական համալիրում, որն էլ համարվում է մասնավոր դպրոց:

Իշխանականները նաեւ նույն պատճառով մեղադրում էին Մանե Թանդիլյանին իր որդիներին արտասահմանում սովորելու ուղարկելու համար:

Այդ ինչպե՞ս է ստացվում, որ Արմեն Աշոտյանի եւ Մանե Թանդիլյանի երեխաների՝ արտասահմանում սովորելը մեղք է, իսկ Ժաննա Անդրեասյանի երեխաների դեպքում դա նրանց իրավունքն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄՏԱԴԻՐ ԵՆ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ

ԱՊՀ երկրների ներկայացուցիչները հայտնել են իրենց հանձնառությունը սերտ համագործակցությանը՝ ապահովելու պարենային անվտանգություն միավորման տարածքում: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այդ մասին ասված է պարենային անվտանգության ոլորտում համագործակցության հարցերով Աստանայում անցկացված ԱՊՀ նախարարական խորհրդաժողովի արդյունքներով ընդունված կոմյունիկեում:

«Նախարարական խորհրդաժողովի շրջանակներում ստորագրվել է կոմյունիկե, որտեղ կողմերը հաստատել են սերտ փոխգործակցությանը եւ համագործակցությանը իրենց հանձնառությունը՝ ԱՊՀ երկրներում պարենային անվտանգության ապահովման համար», - ՏԱՍՍ գործակալությունը մեջբերում է Ղազախստանի գյուղատնտեսության փոխնախարար Էրբոլ Տասժուրեկովի խոսքերը:

Ըստ փոխնախարարի՝ ԱՊՀ գործադիր կոմիտեին կից նաեւ ստեղծվել է օպերատիվ շտաբ, որի շրջանակներում կիրականացվի պարենային անվտանգության հետ կապված հարցերի լուծման աշխատանքը:

«Խորհրդաժողովի ընթացքում մենք քննարկեցինք խնդրահարույց հարցեր եւ հրատապ մարտահրավերներ: Դրանց թվում են փորձի, տեխնոլոգիաների փոխանակումը, համատեղ նախագծերի ստեղծումը եւ համատեղ ելքն արտաքին շուկաներ», - նշել է Տասժուրեկովը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 23 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 26-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻՑ

Լեռնային Ղարաբաղի նախագահ Սամվել Շահրամանյանը մանրամասներ ներկայացրեց Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մի խումբ քաղաքացիների հետ հանդիպման արդյունքից:

Ինչպես տեղեկացնում է «Ժողովուրդ» օրաթերթը, դիմելով Հայաստանում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչության շենքի մոտ հավաքված բողոքի ակցիայի մասնակիցներին՝ Շահրամանյանն ասաց, որ հանդիպման ժամանակ պարզաբանումներ են տվել մի խումբ քաղաքացիների հնչեցրած հիմնական հարցերին:

«Հարցերի մեծ մասը վերաբերում էր սոցիալական խնդիրներին՝ տեղավորման, աշխատանքի եւ աշխատավարձի հետ կապված: Բոլոր հարցերին տրվել է պատասխան մեր լիազորությունների շրջանակում: Մենք պատրաստ ենք նաեւ ձեր հարցերը գույքագրել եւ ներկայացնել համապատասխան մարմիններին: Ամեն ինչ չէ, որ մեզանից է կախված, բայց մենք փորձելու ենք ձեր հարցերին լուծում տալ: Այդ նպատակով որոշել ենք, որ այստեղ տրամադրելու ենք երկու սենյակ, եւ այն քաղաքացիները, որոնք ցանկություն են հայտնել կամավոր զբաղվել ձեր հարցերով, ունենալու են այդ հնարավորությունը:

Հաջորդ հարցը մեր քաղաքական ապագայի հետ է կապված: Ուզում եմ բոլորից ներողություն խնդրել, բայց կան հարցեր, որ ճիշտ չեմ համարում բարձրաձայնել, որը մեզ համար վտանգներ կարող է պարունակել: Խնդրում եմ այսքանով բավարարվել»,- ասաց Շահրամանյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչության շենքի դռները բաց են բոլորի համար, պատրաստ են իրենց հնարավորությունների եւ լիազորությունների սահմաններում լուծել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց օրհասական հարցերը:

«Խնդրում եմ մեր հայրենակիցներին սթափ եւ զգոն լինել, պետք չէ դիմել սադրանքների, սա մեզ բնորոշ չէ: Մենք իրավունք չունենք իրար նկատմամբ նման գործելաոճ դրսեւորել: Երբեք ես չեմ հրաժարվել որեւէ մեկի հետ հանդիպելուց եւ հարցեր քննարկելուց: Լրիվ բաց ենք բոլորի համար:

Հիմա խնդրում եմ մեր հայրենակիցներին ցրվել եւ զբաղվել առօրյա հարցերով: Ձեր խնդիրը մեզ համար պարզ է: Առաջիկայում իմ կողմից ստանալու եք հրապարակային պատասխանները ձեր հնչեցրած հարցերին: Բարդ իրավիճակում ենք հայտնվել, եւ այս իրավիճակից դուրս գալու համար մեզ պետք է միայն ու միայն միասնություն»,- եզրափակեց Շահրամանյանը:

Հայաստանում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչության շենքի մոտ լարված իրավիճակ էր ստեղծվել: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մի խումբ քաղաքացիներ, որոնք բողոքի ակցիա էին իրականացնում Հայաստանում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչության շենքի մոտ, ներխուժել էին շենք՝ պահանջելով հանդիպում Լեռնային Ղարաբաղի նախագահ Սամվել Շահրամանյանի հետ:

Team Telecom

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ»-Ի ԱՌԱՋԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲ ընկերությունն իր կառավարման ներքո գտնվող Հավասարակշռված եւ Պահպանողական կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ակտիվներից խոշոր ներդրում է կատարել «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության բաժնետոմսերում առաջնային հրապարակային տեղաբաշխման միջոցով:

Ընկերության ներդրումը կազմում է տեղաբաշխվող բաժնետոմսերի ընդհանուր ծավալի 20%-ը, որը համարժեք է 1 միլիարդ 648 միլիոն ՀՀ դրամին:

Սա նախադեպ է հայաստանյան կուտակային կենսաթոշակային ֆոնդերի շուրջ տասնամյա գործունեության մեջ, երբ ֆոնդերի միջոցներից ուղղակի ներդրում է կատարվում տնտեսության իրական հատվածում՝ ձեռք բերելով հայկական ընկերության բաժնետոմսեր:

««Ամունդի-Ակբա»-ի կողմից իրականացրած ներդրումը ոչ միայն մեծացնում է կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների դիվերսիֆիկացիան, այլեւ հնարավորություն է ընձեռում Հավասարակշռված եւ Պահպանողական ֆոնդերի շահառուներին դառնալ «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության անուղղակի բաժնետեր՝ օգտվելով վերջինիս զարգացման հեռանկարներից: Այս քայլով «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն նպաստում է կապիտալի շուկայի զարգացմանը եւ կարող է լավ օրինակ հանդիսանալ այլ ընկերությունների համար»,- նշել է «Ամունդի-Ակբա»-ի գործադիր տնօրեն Ժան Մազեջյանը:

Բարձր գնահատելով «Ամունդի-Ակբա»-ի ներդրումը հայկական ընկերությունում՝ Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը նշել է. ««Ամունդի-Ակբա»-ի այս քայլով ֆոնդի մոտ 400 հազար շահառու անուղղակի կերպով դառնում է մեր ընկերության բաժնետեր: Նման խոշոր միջազգային ֆինանսական կառույցի ներդրումը ցուցիչ է, որ մենք շարժվում ենք ճիշտ ուղեգծով եւ մեր երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը մշակված են տեխնոլոգիական ոլորտի զարգացմանը համապատասխան: Շնորհակալ եմ մեր թիմի հանդեպ ունեցած վստահության համար»:

Team Telecom Armenia-ի բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումն իրականացվելու է մինչեւ սույն թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բաժնետոմսերի տեղաբաշխողն է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունը:

«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ»

«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ»-ը հիմնադրվել է 2013թ.: Ընկերությունը կառավարում է երեք պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդ՝ 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կառավարման ներքո ունենալով շուրջ 377 մլրդ դրամ ակտիվներ:

Ընկերության բաժնետերերն են ֆրանսիական «Ամունդի»-ն, որը Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչն է՝ 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ շուրջ 2 տրիլիոն եվրո կառավարման ներքո ակտիվներով, եւ «Ակբա» բանկը, որը Հայաստանի խոշոր ֆինանսական հաստատություններից է, ներկայացված է երկրի ամբողջ տարածքում, ունի 65 մասնաճյուղ:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ

Team Telecom Armenia-ն տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ընկերությունն առաջին տելեկոմն է, որ իրականացնում է IPO Հայաստանում՝ դառնալով էլ ավելի բաց ու հանրային:

Հանդիսանալով Հայաստանում հեռահաղորդակցության առաջին համակարգի ժառանգորդը՝ Team-ը ժամանակակից տեխնոլոգիաների հետ է համադրում առաջին կապի օպերատորի հարուստ փորձը. 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը կապահովի որակյալ ինտերնետով Հայաստանի բոլոր բնակիչներին:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ընթանալով թվայնացման ճանապարհով՝ բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ եւ շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեւավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարմանն ուղղված, դինամիկ զարգացող ֆինանսատեխնոլոգիական միջավայր:

ԳՈՒՄԱՐ

ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՊԵՏԲՅՈՒՋԵԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ կառավարության որոշմամբ՝ ԿԳՄՍ նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով կապիտալ ծրագրերին հատկացված միջոցների միջեւ կատարվել է վերաբաշխում՝ 15 մլն 144 հազար դրամ գումարի շրջանակում: Գումարը կուղղվի ՀՀ-ում մի շարք հուշարձանների վերականգնման եւ նախագծման աշխատանքներին:

Մասնավորապես, 10 մլն 96 հազար դրամ գումար կհատկացվի ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի Սբ. Գեւորգ եկեղեցու գավիթի վրա զանգակատան տեղակայման աշխատանքների իրականացման համար: Ներկայում պետական բյուջեի միջոցներով իրականացվում են նաեւ եկեղեցու վերականգնման եւ տարածքի բարեկարգման աշխատանքները: Նախատեսվում է, որ վերականգնումից հետո կառույցը ծառայելու է ոչ միայն զբոսաշրջային-ճանաչողական նպատակով, այլեւ շահագործվելու է իր ֆունկցիոնալ բնույթին համապատասխան:

Մնացած գումարը կուղղվի Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Բագարան բնակավայրի Շուշանավանքի նորոգման, ամրակայման եւ վերականգնման, Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի «Բերդկունք» ամրոցի եւ կից կառույցների ամրակայման, վերականգնման եւ տարածքի մասնակի բարեկարգման, ինչպես նաեւ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի Օրբելյանների քարավանատան (Սելիմի) նորոգման, ամրակայման, վերականգնման եւ տարածքի բարեկարգման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ

Ո՞ՒՄ ԿՄԱՐՄՆԱՎՈՐԻ ՊԱՊ ՊՈՂՈՍՅԱՆԸ

Ինչպես տեղեկացրել էինք, օրեր անց՝ հոկտեմբերի 30-ին, եթերում կհայտնվի «Մալենա» ֆիլմը: Պրոդյուսերը Սոս Կարապետյանն է, տնօրենը՝ Անի Երանյանը:

Ֆիլմի գլխավոր հերոսներից մեկին՝ Բարոն 92 մականվամբ երիտասարդին, մարմնավորում է ամերիկաբնակ դերասան Պապ Պողոսյանը:

Բարոն 92-ը սարկաստիկ, ընկերասեր, հետաքրքիր բնավորություն ունի: Իր գործի գիտակն է, որը մարդկային շփումը փոխարինել է համակարգչի՝ վիրտուալ իրականության հետ, ինչի արդյունքում մարդկային փոխհարաբերություններում մի փոքր այլ է, տարբերվում է: Նա եւ՛ մտածում է, եւ՛ վերլուծում, եւ՛ իրավիճակին գնահատական տալիս:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Պապն անկեղծանում է՝ Բարոնն ինքնին իր տեսակին ինչքան էլ նմանվող գծեր ունի, նույնքան էլ չունի, այդ թվում եւ նրա ինտրովերտ լինելը: Պապի խոսքով՝ ինքը եւս հետաքրքրված է համակարգչային ծրագրավորմամբ եւ հետաքրիր է եղել Բարոն 92-ին մարմնավորելը:

«Ֆիլմում նկարահանվելու եւ կերպարին մարմնավորելու առաջարկը ստացել եմ Անի Երանյանից: Այդ պահին Հայաստանում էի, վերադառնալուն պես հանդիպեցինք, քննարկեցինք, եւ քանի որ թիմը կազմված էր պրոֆեսիոնալ, տաղանդավոր եւ լավ մարդկանցից, ինչն էլ, բացի հետաքրքիր կերպարից, առաջարկվող դերից, շատ մեծ նշանակություն ունի սիրով ինտեգրվելու եւ պրոդուկտիվ աշխատելու մեջ, եւ առաջարկն ընդունելիս ստիպեց՝ երկմտանքի առաջ չկանգնեմ եւ սիրով ընդունեմ առաջարկը՝ աշխատելու թե՛ կերպարիս եւ թե՛ այս թիմի հետ»:

Պապի խոսքով՝ մինչ այս գտնվում էր ստեղծագործական դադարի մեջ, բայց ոչ ամբողջությամբ. «Հակառակ աղմկոտ աշխարհի՝ լուռ էի, կենտրոնացած ինձ վրա: Տեւական ժամանակ դադար էի տվել, բայց ոչ ամբողջությամբ. մտքերս թղթին էի հանձնում, գրում էի, ջնջում: Նաեւ ներկայացումների եմ մասնակցել մի քանի՝ Լոս Անջելեսի մանուկներին ուրախություն եւ հետաքրքիր գույներ պարգեւելով»:

Անդրադառնալով ապագա պլաններին՝ Պապը նախընտրում է լռել. պլաններ կան, բայց թե որից ու երբ կսկսի, չգիտի:

«Հայրենիք վերադառնալու պլաններ միշտ ունեմ թե՛ գործունեությամբ եւ թե՛ որպես պարզապես հայ: Հայրենիքին կպնելու ցանկություն միշտ կա եւ կլինի, հենց դրա արդյունքում էլ հաճախ եմ լինում հայրենիքում: Ամեն դեպքում, այստեղ, թե այնտեղ, աշխատանքս հայ հանդիսատեսի համար է»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ

Օսկարակիր դերասան Ջորջ Քլունին եւ հոլիվուդյան այլ բարձր վարձատրվող դերասաններ «Էկրանի դերասանների գիլդիա -հեռուստատեսության եւ ռադիոյի արտիստների ամերիկյան ֆեդերացիա» (SAG-AFTRA) արհմիությանը 150 միլիոն դոլար են առաջարկել, որպեսզի օգնեն գրեթե 100 օր շարունակվող գործադուլի դադարեցմանը: Այս մասին տեղեկացնում է Reuters գործակալությունը:

Ըստ հրապարակման՝ առաջարկի փաստը հոկտեմբերի 19-ին հաստատել է Ջորջ Քլունիի խոսնակը: Այն նախատեսում է արհմիությանը երեք տարվա ընթացքում տրամադրել լրացուցիչ 150 միլիոն դոլար՝ օգնելու ֆինանսավորել առողջության ապահովագրությունը, որի պայմանները պետք է բարելավվեն:

Քլունին հոլիվուդյան Deadline պարբերականին հայտնել է, որ բարձր վարձատրվող բազմաթիվ դերասաններ ցանկանում են մասնակցել լուծումներ գտնելու գործին:

«Կարծում ենք՝ արդար է, որ մենք արհմիությանն ավելի շատ վճարենք», - ասել է նա:

SAG-AFTRA-ից առայժմ մեկնաբանություն չեն տվել այս հրապարակումների առնչությամբ:

Արհմիության անդամները գործադուլի են դուրս եկել հուլիսից: SAG-AFTRA-ի եւ ֆիլմերի ու հեռուստատեսային շոուների պրոդյուսերների արհմիության միջեւ բանակցություններն անցյալ շաբաթ տապալվել են:

Գործադուլի պատճառով խաթարվել է ֆիլմերի եւ հեռուստաշոուների արտադրության գործընթացը, նկարահանող անձնակազմի հազարավոր անդամներ, ինչպես նաեւ դերասաններ մնացել են առանց աշխատանքի:

Դերասանները պահանջում են, որպեսզի իրենց արդարացի վճարեն սթրիմինգային ծառայությունների ստացած եկամուտներից, պաշտպանություն ապահովի արհեստական բանականությունից, որը կարող է օգտագործել իրենց կերպարը կամ փոխարինել իրենց աշխատանքը:

Հոլիվուդյան սցենարիստները նույնպես գործադուլ էին անցկացնում, սակայն նրանք հոկտեմբերին համաձայնության են եկել նոր պայմանագրի շուրջ, որը վերջ է դրել սցենարիստների 148-օրյա գործադուլին:

ՍՊՈՐՏ

«ՅՈՒՆԱՅԹԵԴ»-Ի ՓՈՐՁԵՐԸ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդը» կփորձի հունվարյան տրանսֆերային պատուհանի ժամանակ ձեռք բերել Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերի» 25-ամյա իտալացի պաշտպան Ֆեդերիկո Դիմարկոյին. հաղորդում է TEAMtalk-ը: «Ինտերը» Դիմարկոյի տրանսֆերից ակնկալում է առնվազն 50 միլիոն եվրո: Դիմարկոյի ծառայություններով հետաքրքրված է նաեւ Մադրիդի «Ռեալը»:

Իտալիայի ընթացիկ առաջնությունում Դիմարկոն իտալացի Սիմոնե Ինզագիի գլխավորած թիմի հետ մասնակցել է 7 հանդիպման, խփել է 1 գոլ, կատարել 3 գոլային փոխանցում:

ՄՈՈՒՐԻՆՅՈՅԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Իտալական «Ռոմայի» պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոն խոսել է ֆուտբոլում գլխավորի մասին:

«Մեր մարզաձեւում ամենակարեւորը հաղթելն է, ոչ թե փիլիսոփայություն վաճառելը: Ֆուտբոլում նպատակը արդարացումներ վաճառելը չէ, այլ հաղթող դառնալը: Միակ նպատակը հաղթանակին հասնելն է: Ես ունեմ գործընկերներ, որոնք ամբողջ կարիերայի ընթացքում ոչ մի տիտղոս չեն նվաճել, բայց նրանք էլ հաղթող են, քանի որ հասնում են ինչ-որ նպատակի: Հաղթանակը չի նշանակում, որ դու անպայման տուն կբերես մեդալ կամ գավաթ»,- Մոուրինյոյի խոսքը մեջբերում է gameplan-a.com-ը: Մոուրինյոն մարզչական կարիերայի ընթացքում գլխավորել է նաեւ պորտուգալական «Բենֆիկան», «Ունիան Լեյրիան», «Պորտուն», անգլիական «Չելսին», «Մանչեսթեր Յունայթեդն» ու «Տոտենհեմը», Միլանի «Ինտերն» ու Մադրիդի «Ռեալը»:

ՕԳՆԵԼ Է ՍԵՎԻԿՅԱՆԻՆ

Ռուսական «Պարի Նիժնի Նովգորոդի» գլխավոր մարզիչ Սերգեյ Յուրանն իր խորհրդով նպաստել է, որպեսզի իր ղեկավարած թիմի հարձակվող Էդգար Սեւիկյանն ընտրի Հայաստանի հավաքականը, թեեւ հրավեր ուներ նաեւ Ռուսաստանի հավաքականից: «Չեմ թաքցնի, որ զրույց եմ ունեցել Սեւիկյանի հետ: Ես նրան ասացի, որ ֆուտբոլային կյանքը կարճ է: Իհարկե, ես կցանկանայի նրան տեսնել Ռուսաստանի հավաքականում, բայց ես չգիտեմ, եւ ոչ ոք չգիտի՝ երբ մեզ կվերադարձնեն միջազգային մրցումներ: Հայաստանի հավաքականում հիմա հավաքվել են լավ ֆուտբոլիստներ, այդ թվում՝ Ռուսաստանի Պրեմիեր լիգայից: Ամեն ֆուտբոլիստ էլ ցանկանում է խաղալ Եվրոպայի եւ աշխարհի առաջնության ընտրական հանդիպումներում, հնարավոր է նաեւ եզրափակիչ մրցաշարում: Ֆուտբոլից պետք է վերցնել առավելագույնը: Էդգարն արձագանքեց. «Ես հասկացա: Ցանկանում եմ սկսել հենց հիմա»: Եվ նա ընտրեց Հայաստանի հավաքականը: Այս պահին համարում եմ դա ճիշտ որոշում: Պետք է խաղալ»,- Յուրանի խոսքը մեջբերում է Sport-express-ը: 22-ամյա Էդգար Սեւիկյանը Հայաստանի հավաքականում նորամուտը նշել է Լատվիայի թիմի դեմ «Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի 7-րդ տուրի խաղում՝ 70-րդ րոպեին փոխարինելով Բրատիսլավայի «Սլովանի» հարձակվող Տիգրան Բարսեղյանին: Հայաստանի հավաքականն այդ խաղում պարտվել է 0:2 հաշվով:

● *Հոկտեմբերի 21-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Գնա մեռի, արի սիրեմ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՕՐԵՆՔ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը տարածվում է արդյոք գրավատների վրա:

Ռուբինա Հարությունյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձանց, Ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի, պետական եւ այլ հիմնարկների, դրանց՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), օտարերկրյա կազմակերպությունների՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) (այսուհետ՝ կազմակերպություններ) վրա:

Այն չի տարածվում բանկերի եւ դրանց առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, վարկային կազմակերպությունների վրա:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սահմանափակումները չեն տարածվում ֆիզիկական անձանց կողմից կատարվող, նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող վճարումների վրա: Կանխիկ դրամով վճարումներն նկատմամբ սահմանվում են հետեւյալ սահմանափակումները. ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը 300000 դրամ է:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչպես կարելի է ձեռք բերել կառուցվող բազմաբնակարան (ստորաբաժանված) շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք:

Տիրուհի Հարությունյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում բնակարան կամ ոչ բնակելի տարածք ձեռք բերելիս սեփականության իրավունքով ձեռք է բերվում հողամասի համապատասխան բաժնային մասը: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդված):

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը անձի՝ ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Հողամասի մասը կարող է օտարվել առանց նախօրոք առանձնացվելու: Դրա համար օտարման պայմանագրին, որպես դրա անբաժանելի մաս, պետք է կցված լինի հողամասի օտարվող մասի հատակագիծը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

«Ժողովուրդ» օրաթերթն ականատես է եղել, թե ինչպես են ոստիկանները փակել Տերյան-Սայաթ - Նովայի խաչմերուկը:

Բանն այն է, որ այդտեղ ճանապարհի էր փլուզվել:

Տեղեկացանք, որ այդ հատվածում տեւական ժամանակ ջրի խողովակ է խափանված եղել, չեն գտել, թե որ հատվածից է այդ խափանումը: Եվ ահա, ճանապարհը փլուզվել է, ու գտել են, թե որ հատվածից է ջրի խողովակը վթարվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	0 + 4 +12 + 16
Կոտայքի լեռներ	+ 5 + 8 +10 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 11 +12 + 14
Գեղարքունիք	+ 3 + 8 +7 + 12
Լոռի	+ 4 + 9 +10 + 13
Տավուշ	+ 7 + 10 +11 + 15
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 + 9 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 10 + 12 + 15
Արարատ	+10 + 13 +15 + 17
Արմավիր	+10 + 12 + 15 + 17
Վայոց ձորի լեռներ	+ 1 + 3 +11 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10 +20 + 24
Սյունիքի հովիտներ	+10 + 13 +20 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 8 + 9 + 14
ԼՂՀ	+ 6 + 9 +15 + 19
Երեւան	+ 5 + 10 +18 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԳ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*